ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «19» 10 2018թ. № 898-Ա

ՀՀ ԳԱԱ «ԷԿՈԼՈԳԱՆՈՈՍՖԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՆԱԼԻՏԻԿ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ՕԲՅԵԿՏԻ) ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 20-րդ հոդվածի 2-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի № 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կենտրոնական անալիտիկ փորձարկման լաբորատորիան նշանակել սույն հրամանի հավելվածում նշված Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին՝ համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ № 027/Т-068) N 1-Բ հավելվածով սահմանված հավատարմագրման ոլորտում ընդգրկված արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի, ցուցանիշների և համապատասխան տեխնիկական կանոնակարգով

սահմանված փորձարկման (այդ թվում՝ նմուշառման) մեթոդը սահմանող փաստաթղթերի նշագրերի:

2. ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կենտրոնական անալիտիկ փորձարկման լաբորատորիային համապատասխանության գնահատման մարմին նշանակել մինչև 2022 թվականի օգոստոսի 30-ը, տրամադրել նշանակման վկայական՝ Ն-15 և շնորհել նույնականացնող համար՝ Ն-015(Հ-15)2018:

3. ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կենտրոնական անալիտիկ փորձարկման լաբորատորիան գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի № 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Ա. Բաբայանին:

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված №1
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի 2018 թ.
_____ ____-ի N ____ -Ա հրամանի

ՑԱՆԿ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի № 68 որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 034/2013)
2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի № 880 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի անվտանգության մասին» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 021/2011)
3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի № 882 որոշմամբ հաստատված «Մրգերից և բանջարեղենից պատրաստված հյութերի արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 023/2011)
4. .Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի № 883 որոշմամբ հաստատված «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 024/2011)
5. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի № 769 որոշմամբ հաստատված «Փաթեթվածքի անվտանգության մասին» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 005/2011)
6. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի № 799 որոշմամբ հաստատված «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 009/2011)
7. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի № 798 որոշմամբ հաստատված «Խաղալիքների անվտանգության մասին» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 008/2011)